«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ

<<Աշակերտ, ուսուցիչ, ծնող փոխհարաբերություններն ու համագործակցությունը>>

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ՝ քաղաք Մեծամոր

թիվ 2 դպրոց

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ՝ Նունե Ասրիյան

ՄԵՆԹՈՐ՝ Նարինե Վասիլյան

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....էջ 3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ .....էջ 4

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ .....էջ 5

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ..... էջ 6

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------էջ 13

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ..... էջ 14

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

Նախաբան 3

Յուրաքանչյուր երեխա ունի կրթության իրավունք, ինչն ամրագրված է ՀՀ օրենքներով, միջազգային պայմանագրերով և ենթաօրենսդրական ակտերով: Կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման կարևոր գործոններից մեկը ծնող-աշակերտ-ուսուցիչ համագործակցությունն է :Երբ ընտանիքն ու դպրոցը աշխատում են համագործակցելով ավելի հեշտ է դառնում երեխայի ադապտացիան նոր՝ դպրոցական միջավայրում, որից շահում է երեխան: Այս նախադրյալները նպաստում են, որ ծնողի և ուսուցչի համագործակցությունը օժանդակի երեխայի ուսումնական գործընթացին: Ընտանիքում է տեղի ունենում երեխայի սոցիալականացումը, դերային և վարքագծային կարծրատիպերի, արժեքային համակարգի և աշխարհահայացքի ձևավորումը: Ընտանիքը հոգ է տանում, որ երեխան մեծանա անվտանգ միջավայրում և ապահովում նրա նյութական կարիքները, կրթում և դաստիրակում է, ապահովում երեխայի հոգեկան հանգստությունը: Դառնալավ դպրոցական երեխայի դաստիրակման և կրթման գործը տեղափոխվում է դպրոց: Ընտանեական միջավայրում ձեռք բերած սոցիալական դիրքորոշումները օգնում են երեխային դպրոցական կյանքում ծագած խնդիրների նվազեցմանը կամ հակառակը նպաստում են դժվարությունների դրսևորմանը: Ուստի ընտանիքի դերը երեխայի հոգեկան առողջության պահպանման գործում եղել և մնում է միշտ արդիական: Աճող սերնդի դաստիրակության մեջ կարևոր դեր է խաղում ընտանիքը, ընտանեական դաստիրակությունը: Ինչպես ուսուցիչը, այնպես էլ ծնողը պետք է լավ գիտենա երեխայի անհատական հատկանիշները, նրա ֆիզիկական և հոգեկան առողջական վիճակը, ներվային համակարգի կայունությունը, կամային բռնկվածությունը, հետաքրքրությունները և հնարավորությունները: Ծնողներին այդ հարցերում աջակցում են երեխայի ուսուցիչներն ու դասղեկը: Ծնողների հետ աշխատանքը ուսուցչի գործունեության անբաժան մասն է:

,,Ինչ կցանես, այն կհնձես>>

Ժողովրդական ասացվածք

Գրականության ակնարկ

Ընտանիքը դա բնական միջավայր է երեխայի զարգացման համար: Երեխայի դաստիրակությունը, ադապտասիան շրջապատող աշխարհում և զարգացումը երեք չորորդով կախված է մեծերի ընտանեական հարաբերություններից՝ երեխա-մեծ, մեծ-մեծ հարաբերություններից: Ժամանակակից ընտանիքը ավելի ու ավելի է դառնում երեխայի դաստիրակության գլխավոր օղակը: Ընտանիքը պետք է ապահովի և նյութական և հոգևոր պայմաններ երեխայի ինտելեկտուալ, բարոյական և հոգեվոր զարգացման համար: Ծնողներ՝ ինչպիսին պետք է լինեն ծնողները: Ընդհանուր, պարտադիր կանոն չկա: Ինչևէ... Նուրբ, ուրախ մայրիկ, խելացի և մի քիչ սառը: Զուսպ հայրիկ, որը երբեմն կժպտա և հազվադեպ կատակներ կանի: Հավանաբար հենց այդպիսի մանրունքների վրա է հեղինակությունը ու սերը երեխաների հանդեպ: Իսկ երեխան. Ինչպիսին էլ նա լինի, երբ ամենուր նրա համար վատ է , նա պետք է տանը պաշտպանված լինի, նա պետք է գիտենա, որ տանը լույսը միշտ վառ է, որ տանը կտաքացնեն առանց ավելնորդ հարցերի և խորհուրդների: Պրոբլեմի պատկերացումը շատ ակտուալ է, որի էֆֆեկտիվության գլխավոր պայմանը ուսումնադաստիրակչական գործում ընտանիք-դպրոց համագործակցությունն է , որը դիտարկվում է մանկավարժ-ծնող փոխհարաբերությանբ: Դպրոցի և ընտանիքի սերտ հարաբերությունները կարող են զարգանալ ի շնորհիվ ծնող-ուսուցիչ ներգրավվածությունը դաստիրակչական գործընթացում:

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

Հետազոտության մեթոդները

Ուսուցչի աշխատանքը ծնողների հետ

Ծնողների հետ մշտապես համագործակցելու շնորհիվ է, որ ծնողը վստահում է ուսուցչին, ընկալում, որ իրենց երեխայի կյանքի նկատմամբ ուսուցիչը անտարբեր չի: Ծնողները ձգվում են դեպի դպրոց, վճռականորեն համոզված, որ ուսուցչի հետ զբաղվելու են իրենց երեխայի դաստիրակությամբ:

Ոսորցչի մանկավարծական գործունեության նպատակն է զարգացնել սովորողների կրթական մակարդակը, պահպանել նրանց ֆիզիկական, բարոյական և հոգևոր առողջությունը:

Խնդիրը՝

1.Ստեղծել բարենպաստ պայմաններ աշակերտի բարոյական, ստեղծագործական և ֆիզիկական զարգացման համար:

2. Դաստիրակել աշակերտներին որպես պատասխանատու և արժանի քաղաքացիներ:

3. Իրականացնել գործողություններ որոնք կնպաստեն ուուսուցիչ-աշակերտ-ծնող փոխհարաբերություններին:
4.Նպաստել դասարանի ինքնակառավարմանը:

5. Դաստիրակության բոլոր փուլերում իրականացնել հոգեբանական օգնություն:

Աշակերտ

Ծնող Ուսուցիչ

Մանկավարժական առաջնային գաղափարն է ոսկյա եռանկյունին

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

<<Միայն ծնողների հետ միասին, համատեղ ջանքերով ուսուցիչը կարող է տալ երեխային մարդկային մեծ երջանկություն>>

Վ.Ա.Սուխամլինսկի

Հավաքվել միասին՝ դա սկիզբն է,

Մնալ միասին՝ դա առաջընթաց է,

Գործել միասին ՝դա հաջողություն է:

Գ. Ֆորդ

Տվյալների մշակում և վերլուծություն

Ծնողների հետ շփման կարգը

1.Հիշեք, որ երեխան ծնողի համար ամենաթանկ էակն է:

Եղեք խելացի, հանդուրծող, նրբանկատ և կոռեկտ :Աշխատեք չնեղացներ և չստորացնել նրանց արժանապատվությունը:

2.Ծնողի համար յուրաքանչյուր հանդիպում պետք է լինի օգտակար և արդյունավետ: Ժողովներին նրանց զինեք մանկավարժական, հոգեբանության և ուսումնական ոլորտներից նոր գիտելիքներով:

3.Միայն ծնողի հետ համագործակցության միջոցով կարելի է հասնել լավ արդյունքի:

Ուսուցչի աշխատանքի հիմքը համագործակցությունն է՝ ուսուցիչ- աշակերտ-ծնող:

Շատ կարևոր է ուսուցիչ-ծնող փոխհարաբերությունը: Չէ որ երեխան դաստիրակչական գործում միայն օբեկտ չի, նա նաև սուբեկտ է: Դրա համար անհրաժեշտ է բոլոր հնարավոր միջոցներով համագործակցել ծնողների հետ:

4.Ծնողների հետ համագործակցելով, ստեղծել բարենպաստ միջավայր և դաստիրակել համամարդկային արժեքներ կրող , գիտակից քաղաքացիներ:

5.Ծնողների հետ դաստիրակչական աշխատանք կատարելու նպատակից ելնելով առանձնացնում ենք հետևյալ խնդիրները.

-Ստեղծել բարեհամբուր մթնոլորտ ուսումնադաստիրակչական գործընթացի բոլոր մասնակիցների համար՝ աշակերտ-ծնող-ուսուցիչ:

-Ներդնել ծնող լինելու կուլտուրա, տիրապետել երեխաներին դաստիրակելու և նրանց հետ համագործակցելու մեթոդներին:

-Ծնողներին միմիյանց հետ շփվելու համար ստեղծել բարենպաստ մթնոլորտ:

-Ուսումնասիրել ընտանիքի երեխային դաստիրակելու հնարավորությունները:

- Բարձրացնել դաստիրակչական գործոնը ընտանիքում և ձևավորել ծնողների ակտիվությունը այդ գործում:

-Օգնել ծնողներին բարձրացնելու իրենց մանկավարժական ինքնագիտակցությունը:

-Խնդիրը մանրամասն ուսումնասիրելու համար մեկ հետազոտությունը քիչ է , անհրաժեշտ է կատարել մի քանի ուսումնասիրություններ, որպեսի ստանանք իրական պատկերը:

Ծնողների հետ համագործակցության ժամանակ չի կարելի հենվել միայն ինտուիցիայի վրա, անհրաժեշտ է գիտենալ ժամանակակրց ընտանիքների առանձնահատկությունները, նրանց վերաբերմունքը դպրոցի և կրթության փոփոխությունների նկատմամբ: Ընտանիքի հետ աշխատանք տանելիս ուշադրության

օբեկտ պետք է դառնա ոչ թե ընտանիքը, այլ ընտանեական դաստիրակությունը: Կարևոր է ուսումնասիրել ընտանիքում տիրող մթնոլորտը, աշակերտի շրջապատը, նրա փոխհարաբերությունները ընտանիքի անդամների հետ:

Շատ գիտնականներ, հոգեբաններ և մանկավարժներ ծնողների հետ աշխատանքին են նվիրել իրենց աշխատությունները, որոնցում մեզ առաջարկում են ժամանակակից մանկավարժական տեխնիկա ծնողների հետ աշխատանք տանելու համար: Այդպիսի

շատ նյութեր կան ,,Начальная школа,, и ,,Начальное обучение и воспитание,, ամսագրերում, ուր իրենց փորձով կիսվում են շատ ուսուցիչներ: Նրանք բազմիցս ընդգծում են, որ միայն ընտանիքի և դպրոցի համատեղ աշխատանքը կտա դրական արդյունք՝ բազմզկողմանի զարգացած երեխա դաստիրակելու համար:

Ինչից սկսել

Ծնողների հետ աշխատանքը մեր դպրոցում սկսվում է դեռ մինչև իրենց երեխաները դպրոց կհաճախեն: Մեր դպրոց են հաճախում քաղաքի և շրջակա գյուղերի երեխաները:

Նախքան դասերի սկսվելը համացանցի օգնությամբ տեղեկացնում ենք դպրոցի ուսումնական գործունեությանը: Ուսուցիչները մեծ աշխատանք են տանում, որ ծնողները նախընտրեն մեր գեղեցիկ, լուսավոր և նոր վերանորագված դպրոցը: Նկարահանում ենք տեսահոլովակներ և ներկայացնում մեր դպրոցի առավելությունները մյուսների նկատմամբ: Դպրոց ընդունված երեխաներին ծանոթացնում ենք դպրոցի կարգ ու կանոնին: Հրավիրում ենք ծնողական ժողովներ, ուր ծնողներին ևս ծանոթացնում ենք մեր դպրոցի պայմաններին և պահանջներին: Օգոստոսի վերջում ծնողները լրացնում են հարցաթերթ:

Հարցաթերթ

1.Աշակերտի անուն, ազգանուն, հայրանունը

2.Ինչ առանձնահատկություն ունի Ձեր երեխան

3.Ծնողի անուն, ազգանուն, հայրանունը

4.Երեխայի դաստիրակությամբ էլ ով՞ է զբաղվում

5.Քանի՞ երեխա կա ընտանիքում

6.Ինչ օգնություն կարող եք ցուցաբերել դասարանին և դպրոցին

Վերջին հարցի օգնությամբ մենք աշխատում ենք ավելի շատ ծնող ընդգրկել դպրացական ծնողական կոմիտեի մեջ ,որը ընտրվում է հենց այդ ժողովի ժամանակ: Մեծ ուշադրություն ենք դարձնում և օգնում ենք, որ նոր ընդունված երեխաները արագ ադապտացվեն նոր միջավայրում, ընկալելով, թե ինչպես երեխան իրեն կզգա դպրոցում,

դրանից է կախված նրա հաջողությունները ուսման մեջ: Յուրաքանչյուր դասարանում կան երեխաներ և ընտանիքներ որոնք ունեն պրոբլեմներ: Իմ կարծիքով անհատական զրույցներն ու կոնսուլտացիաները ծնողների հետ շատ կարևոր են: Անհատական զրույցի ժամանակ կարելի է ասել այն ինչը ծնողական ժողովին անհնար է ասել: Այդ միջավայրում կարելի է բազմաթիվ տարբերակներից գտնել այն միակը, որը ցանկալի արդյունք կտա: Որպեսզի նման զրույց կայանա, ծնողը պետք է համոզված լինի, որ այդ պրոբլեմը իրենց է վերաբերվում և անմիջական լուծում է պահանջում:

Հաճախ եմ անցկացնում զրույց հետևյալ թեմաներով՝

-Կոպտությունը և ընտանիքում չհասկանալը:

-Երեխան չի ուզում սովորել: Ինչպես՞ օգնել նրան:

-Ընտանիքի միակ զավակն է: Ինչ ուղիով հաղթահարել դաստիրակության դժվարությունները

-Տաղանդավոր երեխան ընտանիքում:

-Վատ սովորույթներ: Ինչպես դրանց դեմ պայքարել:

Աշխատում եմ ուշադիր լինել երեխայի հոգեկան առողջությանը: Երեխայի հոգեկան առողջության կարևոր գրավականը ընտանիքում տիրող մթնոլորտն է: Ընտանիքի մթնոլորտը երեխայի վրա թողնում է իր ազդեցությունը ստեղծելով լավ կամ վատ միջավայր: Կան ծնողներ որոնք ոչ միայն չեն կարողանում լինել դրական օրինակ իրենց երեխաների համար, այլ նույնիսկ կան ծնողներ որոնց վարքն ու գործունեությունը բացասական է ազդում երեխայխ վրա, խանգարում նրա հոգեկանը: Ես գտնում եմ, որ այդ հարցի լավագույն լուծումը երեխա-ծնող փոխըմբռնումն է: Ծնողները շուտ են ընկալում, որ իրենց երեխայի հետ ինչ որ բան այնպես չէ, ինչ-որ բան նրան անհանգստացնում է, որ իրենց երեխան հայտնվել է պրոբլեմային իրավիճակում: Հայտնի է, որ սեփական երեխային դաստիրակելու համար չկա պատրաստի դեղատոմս,

որը կարելի լինի օգտագործել: Չնայած դրան որոշ խորհուրդներ կօգնեն ծնողներին: Միայն ծայրահեղ դեպքում, որ երեխան բոլորովին չի լսում, չի ենթարկվում կարգ ու կանոնի, միայն այդ ժամանակ ծնողը կարող է մտածել պատժելու մասին: Հասկանալի է, որ պատիժը պետք է համապատասխանի արարքին, իսկ երեխան պիտի գիտակցի, թե ինչի համար են իրեն պատժում: Ծնողը ինքն է որոշում ինչպես պատժել, բայց և հարկավոր է գիտակցել, որ ֆիզիկական պատիժը պետք է բացառվի: Ծնողի հետ աշխատանք տանելիս ուսուցիչը պետք է բացատրի, որ պատիժը ազդում է երեխային և

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

հգեկան և ֆիզիկական առողջության վրա: Պատիժը կարող է դուրս մղել սերը, առաջացնելով ատելություն: Անհատական զրույցներ կարելի է անցկացնել ծնողի, երեխայի և ինչի ոչ, նաև ընտանիքի մյուս անդամների հետ: Անցած տարի ես որոշեցի օգտագործել նոր մանկավարժական տեխնոլոգիա՝ ,,Ստեղծել հաջողության հասնելու իրավիճակ,,: Դրա իմաստը այն է, որ երեխան ուսման մեջ ուրախություն գտնի և որից հպարտության ինքնազգացողություն կունենան սեփական հաջողությունների նկատմամբ, և չըմտածի ,որ ինքը ոչնչի ընդունակ չի: Սակայն դրական արդյունքի կարելի էր հասնել միայն ծնողների հետ համատեղ աշխատանքի շնորհիվ: Մենք միասին առանձնացրեցինք չորս կանոն, որին պետք է հետևեի և ես և ծնողները: Ահա դրանք՝

1.Հարկավոր է ուշադրություն դարձնել մեր երեխաների ամենաաննշան հաջողությունների վրա, որ երեխան զգա իր հաջողության արդյունքի գնահատումը և ձգտի հասնել լավագույն արդյունքների:

2. Երբեք չհամեմատել սեփական երեխային ուրիշ երեխայի հետ:

3.Երբեք երեխային չհուշել խնդրի պատրաստի պատասխն

4.Չամաչել սիրել սեփական երեխային, բայց և դա չպետք է վերածվի ամենաթողության:

<<Հաջողության իրավիճակի>> արդյունքը չհապաղեց: Դասարանում կար մի աղջիկ, որը խոսում էր մեծ դեֆեկտով: Աղջիկը ոչ մեկի հետ չէր խոսում, չէր շփվում և չէր պատասխանում դասերը: Ուսուցիչների դասահարցմանը միշտ պատասխանում էր ,, Ես պատրաստ չեմ,, կամ ,,Չեմ սովորել,,: Ծնողների հետ զրույցից հետո պարզվեց, որ աղջիկը միշտ տանը պատրաստում է դասերը, բայց պատասխանել ամաչում է, քանի որ վատ է խոսում : Ես առաջարկեցի ծնողներին երեխայի հետ տանը զրուցել, որ ոչ ոք չի ծիծաղի նրա վրա և, որ անպայման պատասխանի դասերը: Եվ երբ Անահիտը դասի ժամանակ կամաց և հստակ սկսեց պատմել Արտաշես առաջինի բարեփոխումները , ես գովեցի երեխային և հենց այդ պահին դասարանը սկսեց ծափահարել և

համադասարանցիները ևս գովեստի խոսքեր ասացին, իսկ կողքին նստած աղջիկը նույնիսկ գրկեց նրան: Հաջորդ օրերին Անահիտը առանց ամաչելու պատասխանում էր դասերը և սկսեց առանց կաշկանդվելու շփվել համադասարանցիների հետ: Որոշ ժամանակ անց նա սկսեց մասնակցել նաև համադասարանական միջոցառումներին և պարզվեց, որ նա դերասանական ունակություններ ունի: Ի շնորհիվ այն բանի, որ ծնողներն ու ուսուցիչը դիմեցին այդ տեխնոլոգիային երեխաների մոտ առաջացավ հավատ սեփական ուժերի նկատմամբ: Երեխաները այլևս չէին վախենում դասերին

սխալվել, քանի որ չի սխալվում նա ով չի աշխատում, իսկ մենք աշխատում ենք, աշխատում ենք ուղղել մեր թույլ տված սխալները:

Ծնողական ժողով

Ծնողի հետ աշխատանքի անբաժան մաս է կազմում ծնողական ժողովը: Ժողովներին ծնողները ոչ միայն տեղեկանում են իրենց երեխաների առաջադիմության մասին, այլև ստանում են կոնկրետ գիտելիքներ և հանձնարարություններ իրենց երեխաներին դաստիրակելու մասին: Ծնողական ժողովներին ծնողները կիսվում են իրենց փորձով, որը շատ ուսուցողական է լինում: Նախապատրաստվելով ծնողական ծողովի աշխատում եմ հետևել հետևյալ կանոններին՝

1.Ծնողները պետք է գիտենան որոշված ծնողական ժողովների օրերը, որպեսի կարողանան նախորոք պլանավորել իրենց գործերը:

2.Ծնողական ժողովները աշխատեք սկսել դասարանական կյանքի դրական փաստերից խոսելով: Խոսելով բացասական երևույթների մասին, հարկավոր է տալ նաև ռեալ առաջարկներ բացասականը վերացնելու համար: Բոլոր փաստերը, որ բերում է ուսուցիչը պետք է լինեն ճշմարիտ և կասկածի տեղիք չտան:

3.Չի կարելի նախատել ծնողին երեխայի անհաջողության համար կամ ի ցույց դնել նրա վատ վարքը, դա հանգեցնում է նրան, որ ծնողը դադարում է ծնողական ժողովներին մասնակցել: Ծնողական ժողովների նպատակն է ճիշտ և լավ փոխհարաբերություններ ամրապնդել աշակերտի, ծնողի և ուսուցչի միջև, որպեսի կարողանան լուծել հանրակրթական հաստատության ուսումնադաստիրակչական խնդիրները: Ես գտնում եմ, որ ծնողական ժողովի գլխավոր նպատակը ծնողներին նոր գիտելիքներով և փորձով հարստացնելն է և ընտանեական դաստիրակության կազմակերպմանն օգնելը:

Արտադասարանական գործունեություն

1.Ծնողները պետք է ակտիվ մասնակցություն ուներան դասղեկի ժամերի և արտադասարանական միջոցառումների նախապատրաստմանն ու անցկացմանը: Շատ հաճախ ես ծնողներին հրավիրում եմ մասնակցելու դասղեկի ժամերի և

արտադասարանական միջոցառումների: Հարկավոր է նշել, որ ծնողները ոչ միայն մասնակցում են միջոցառումներին, այլև մեծ ներդրում են ունենում դրանց նախապատրաստմանը: Դա նպաստում է նրան, որ ծնողներն ու երեխաները հնարավորություն են ունենում շփվելու ուրիշ միջավայրում և դա փոխում է նրանց փոխհարաբերությունները: Մեր դպրոցում լավ ավանդույթ կա անցկացնել սպորտային խաղեր ծնողների մասնակցությամբ: Անցկասնում եմ նաև թեմատիկ ցերեկույթներ նվիրված ծնողներին:

2.Ծնողների մասնակցությամբ կազմակերպել ենք էքսկուրսիաներ Մեծամորի տուն թանգարան, Սարդարապատի և Ծիծեռնակաբերդի հուշարձան համալիրներ: Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում դիտել ենք ,,Գայանե,, բալետը և ,,Անուշ,, օպերան: Այս աշխատանքը օգնում է բազմակողմանի զարգացնել երեխային: Չէ որ յուրաքանչյուր գիտակից քաղաքացի պետք է գիտենա իր երկրի պատմությունն ու մշակույթը: Հաճախ ենք կազմակերպում էքսկուրսիաներ բնության գիրկ: Դա նախ մերձեցնում է երեխաներին ծնողների հետ և միևնույն ժամանակ սեր է առաջացնում բնության նկատմամբ:

Այցելություն աշակերտի տուն

Երեխայի ընտանիքը լավ ճանաչելու, նրա դաստիրակության և կյանքի պայմաններին ծանոթանալու համար ես այցելում եմ աշակերտի տուն: Ծնողների հետ զրուցելիս տեղեկություն եմ ստանում աշակերտի բնավորության, նրա հետաքրքրությունների, հակումների և ծնողների հետ հարաբերությունների մասին: Եթե անհրաժեշտ է լինում խորհուրդներ եմ տալիս դասապատրաստման, օրվա ռեժիմի և հիգենայի կանոնների մասին: Ծնողներին տեղեկացնում եմ աշակերտի առաջադիմության և վարքի մասին: Առաջին այցելության ժամանակ ուշադրություն եմ դարձնում `

1.Աշակերտը ունի դաս պատրաստելու տեղ
2.Որտեղ և ինչպես են պահվում նրա գրենական պիտույքներն ու գրքերը

3.Կատարում է արդյոք օրվա հանձնարարությունները

4. Ինչ՞ է կարդում

5.Ինչ՞ պարտականություններ է կատարում ընտանիքում

6.Ինչո՞վ է սիրում զբաղվել ազատ ժամանակ

7.Ինչպես են ծնողները խրախուսում և ինչպես են պատժում երեխային

8.Ծնողների պահանջները երեխայի նկատմամբ միասնական են

9.Ընտանիքում հանգստի ինչ ձևից են օգտվում

Աշակերտի տուն կարելի է այցելել օրինակ, երբ աշակերտը մի քանի ժամ դասերը բաս է թողել անհայտ պատճառով, կամ վատ արարք է կատարել ,կամ ուսման մեջ հետադիմում է:

Աշխատանք ծնողական կոմիտեի հետ

Ծնողական կոմիտեն մեծ դեր է խաղում ծնողների և ուսուցչի համագործակցության մերջ: Ծնողկոմիտեի գործունեությունից է կախված դասարանի ծնողների փոխհարաբերություններն ու մթնոլորտը: Լավ կազմզկերպված կոմիտեն կարող է կատարել տարբեր ֆունկցիաներ, որոնցից մեկն է օգնությունը կրթադաստիրակչական գործունեությանը: Առաջարկում եմ ծնողկոմիտեին կազմակերպել մրցույթ ,,Լավագույն տետր,, կամ ,,Լավագույն պայուսակ,,: Կոմիտեի գլխավոր պարտականությունն է օգնել արտադասարանական գործերում: Ծնողների օգնությունը էքսկուրսիաների ժամանակ շատ կարևոր է, այդ բոլոր միջոցառումները հետաքրքիր են ոչ միայն աշակերտներին , այլ նաև ծնողներին, որովհետև տեսնում և շփվում են իրենց երեխաների հետ անսովոր միջավայրում և վեր են լուծում նրանց վարքը, շփումը մյուս երեխաների հետ: Ծնողները օգնում են դասղեկին բազմաթիվ հարցեր լուծելիս և մեծ օգուտ են բերում դասարանին: Աշակերտները հպարտանում են, որ իրենց ծնողները ներկա են գտնվում արտադասարանական միջոցառումներին, արշավներն, հպարտանում են , որ իրենց ծնողները մասնակցում են դասարանական առօրյային: Ամեն տարեվերջ

մանկավարժական խորհրդակցությունում ես հաշվետվություն եմ տալիս ծնողների և դասղեկի համատեղ աշխատանքի մասին:

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

Եզրակացություն

Ծնողի հետ համագործակցելը միշտ էլ եղել է դպրոցի գործունեության անբաժան մասը: Ուսուցիչ-ծնող-աշակերտ համագործակցության նպատակն է խրախուսել կայուն, շարունակական և արդյունավետ գործունեություն բոլոր երեք օղակներում: Այսօր, երբ ընտանիքների մեծամասնությունը մտահոգ է տնտեսական հարցերով, երբեմն նունիսկ ֆիզիկական գոյատևման համար են պայքարում, շատ ծնողներ նույնիսկ չեն մասնակցում երեխայի դաստիրակությանը ու անհատի ձևավորմանը: Ծնողները չտիրապետելով տարիքային զարգացման առանձնահատկություններին, երեխային դաստիրակում են ինտուիտիվ, կուրորեն, որը չի բերում դրական արդյունք: Նման ընտանիքներում չկա ծնող-երեխա ամուր կապ: Հետևանքը այն է, որ ,,հեղինակավոր,, է դառնում արտաքինը, հաճախ բացասականը: Ծնողին ներգրավել կրթական համակարգի մեջ շատ դժվար խնդիր է: Եվ այստեղ շատ կարևոր է մանկավարժի մասնագիտական հնարքը և ծնողի վստահությունը մանկավարժին: Մանկավարժը և ծնողը ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխային տալիս է ակադեմիական գիտելիքներ, իսկ ընտանիքը ապահովում է գործնական փորձառությունը կյանքում: Երեխայի հետազոտման, նրա կարողությունների , հմտությունների և դժվարությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի համագործակցության միակ շարժառիթն այդ երկու կողմերի ընդհանուր հետաքրքրությունն ու շահերն են: Դպրոցի և ընտանիքի համագործունեությունը երկարատև գործընթաց է, որի միակ նպատակը երեխայի որակյալ կրթության ապահովումն է: Ծնողը և ուսուցիչը հանդիսանում են երեխայի զարգացմանը նպաստող, նրա կրթությունը և դաստիրակությունը իրականացնող անձիք: Երեխայի դաստիրակությունը , ուսումնառությունը

արդյունավետ կարող է լինել միայն նրանց ակտիվ համագործակցության պայմաններում: Ես գտնում են, որ անհրաժեշտ է սահմանել դաստիրակության, ուսումնառության և զարգացման գործընթացի միասնական նպատակներ, համատեղ ուժերով մշակել ուսումնադաստիրակչական գործընթացում առաջացած խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:

Գրականության ցանկ

1.Ամանաշվիլի Շ. Հումանիտար մանկավարծության հիմունքները

Գիրք 1. ,,Իմ ժպիտ, ուր՞ ես դու,, 2014թ.

2.Ախմետովա Մ.Ն. ,,Կրթություն և դաստիրակություն,, - Միջազգային գիտական ամսագիր թիվ 3 /08/ 2016թ.

3.Բաբանսկիյ Յու. Կ. ,,Ուսումնադաստիրակչական գործընթացքի օպտիմիզացիա,, 1982

4.Լոմով Բ.Ֆ. ,,Շփումը որպես ընդհանուր հոգեբանության պրոբլեմ,,

,,Սոցիալական հոգեբանության մեթոդական պրոբլեմները,,

5.Նեմանա Ե.Գ. ,,Ծնողների, երեխաների և մանկավարժների համագործակցություն,,

6.Օլշանսկի Վ.Բ. ,,Միջանձյա հարաբերություններ,,- Սոցիալական հոգեբանություն- 1975թ.

7.Սուխամլինսկի Վ.Ա. ,,Սիրտս տալիս եմ երեխաներին,, Կիև 1999թ.

8.Սուշկով Ի.Ռ. ,,Փոխհարաբերությունների հոգեբանություն,, 1999թ.